Պաշտոնական ընդդիմախոսի

ԿԱՐԾԻՔ

Լիլիթ Անդրեյի Սարգսյանի «Հայաստանի Հանրապետությունում բրուցելոզի համաճարակաբանական բնութագիրը» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված ԺԴ.00.16 «Համաճարակաբանություն» մասնագիտությամբ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Աշխատանքի գործնական նշանակությունը

Ներկայացված աշխատանքը գործնականում հնարավորություն է ստեղծում Հայաստանի Հանրապետությունում բնակչության շրջանում՝ բրուցելոզի համաճարակաբանական օրինաչափությունների բնութագրման, վարակի տարածման ռիսկերի գնահատման հիման վրա մշակել համաճարակաբանական հսկողության նոր մոտեցումներ՝ կիրառելով տարածքային գոտիավորման սկզբունքը, ինչը կարող է բարձրացնել առողջապահական համակարգի կողմից հիվանդության դեմ պայքարի և կանխարգելման միջոցառումների արդյունավետությունը: Ներկայացվող աշխատանքը ներկայացնում է վերջին երկու տասնամյակների ընթացքում բրուցելոզի համաճարակաբանական օրինաչափությունները, կլինիկական և բժշկաաշխարհագրական առանձնահատկությունները, ինչը կարևոր է համաճարակաբանական հսկողության նպատակաուղղվածության և արդյունավետության բարձրացման տեսանկյունից: Բացի այդ, որպես Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանիների և մարդկանց համար ընդհանուր հիվանդություն, բրուցելոզի դեմ պայքարի մշտադիտարկման համար հեղինակի կողմից առաջարկված գիտական մոտեցումները «Մեկ Առողջության» համատեքստում, կարող են օգտակար լինել առողջապահական, անասնաբուժասանիտարական և բնապահպանական ոլորտներում համալիր միջոցառումների մշակման և իրականացման համար՝ հատկապես արտակարգ իրավիճակներում, արագ արձագանքման թիմերի գործողությունների ժամանակ: Ռիսկի գործոնների բացահայտումն ու աշխարհագրական ռիսկերի գնահատումը, ինչպես նաև

համաճարակաբանական կենսառիթմերի գնահատումը հեղինակի հետագա գիտական աշխատանքներում, կարող են հիմք հանդիսանալ բրուցելոզով հիվանդացության որակական և քանակական կանխատեսումների համար:

Աշխատանքի արդիականությունը և գիտական նորույթը

Ատենախոսության արդիականությունը պայմանավորված է ուսումնասիրվող հիվանդության տարածվածությամբ՝ ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում: Բրուցելոզը որպես մարդկանց և կենդանիների համար ընդհանուր, կլինիկական և համաճարակաբանական ծանր հետևանքներ առաջացնող հիվանդություն լուրջ առողջապահական և տնտեսական խնդիրներ է առաջացնում: Հայաստանը ընդգրկված է մարդկանց շրջանում բրուցելոզի տարածվածության ամենաբարձր մակարդակ ունեցող աշխարհի 20 երկրների շարքում: Էնդեմիկ երկրներում այն լուրջ գյուղատնտեսական և առողջապահական խնդիր է, որը զգալի տնտեսական կորուստներ է պատճառում անասնատերերին և հանդիսանում է ծանր հետևանքներով հիվանդություն մարդկանց համար: Որոշ տարածաշրջաններում հիվանդության ցածր մակարդակը, կարող է լինել ոչ բավարար համաճարակաբանական հսկողության, կամ ցածր հայտնաբերվածության արդյունք: Արձանագրված դեպքերը չեն արտացոլում հիվանդության իրական պատկերը, այն մի քանի անգամ ավել է:

Այդ իսկ պատճառով, բրուցելոզի առավել արդյունավետ հսկողության և պայքարի համարժեք միջոցառումներ ձեռնարկելու համար Հայաստանի առողջապահական համակարգը կարիք ունի նմանատիպ հետազոտական աշխատանքների, որոնք թույլ կտան ճիշտ գնահատել հիվանդացության համաճարակաբանական իրական վիճակը:

Ելնելով հարցի հրատապությունից, Լ. Սարգսյանն իր առջև նպատակ է դրել ուսումնասիրել ՀՀ-ում բրուցելոզի համաճարակաբանական օրինաչափությունները՝ առանձին մարզերի կտրվածքով: Ռիսկերի գնահատման արդյունքում հեղինակի կողմից բացահայտվել են տարիքա-սեռային և աշխարհագրական տարածվածության պատկերը հիվանդության երկարաժամկետ շարժընթացում: Իրականում

հիվանդացության մակարդակը ավելի բարձր է, քան պաշտոնական վիճակագրական ցուցանիշները, ուստի խնդիրն ավելի խորը ուսումնասիրության և հիվանդության ակտիվ հայտնաբերմանն ուղղված գործողությունների ալգորիթմերի մշակման կարիք ունի:

Հարկ է նշել, որ կատարված ուսումնասիրություններն արդիական են և կարող են կարևոր գործնական ներդրում դառնալ Հայաստանի առողջապահական համակարգում:

Պաշտպանության ներկայացվող դրույթները

- Ուսումնասիրվել են 2004-2022թթ. ընկած ժամանակահատվածում բնակչության շրջանում բրուցելոզի արձանագրված դեպքերը, կատարվել է հետահայաց վերլուծություն հիվանդացության և տարածվածության շարժընթացի գնահատմամբ, ըստ առանձին մարզերի,
- Ներկայացվել է բրուցելոզի տարածքային գոտիավորման քարտեզ
- Գնահատվել է ՀՀ-ում մարդկանց շրջանում բրուցելոզի առաջացման համաճարակաբանական ռիսկերը,
- Ներդրվել և հետազոտության ընթացքում կիրառվել է ԱՄՆ-ի «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնի» «բրուցելոզ» հիվանդության համար նախատեսված միջազգային ադապտացված հարցաթերթիկի հիմքով հեղինակի կողմից մշակված «բրուցելոզով հիվանդների համաճարակաբանական հարցերի» լրացուցիչ հարցաշարը:

Ներկայացված դրույթները ամբողջովին հավաստվում են և արտացոլված են ատենախոսությունում ստացված արդյունքներով և եզրակացություններով:

Աշխատանքի համառոտ կառուցվածքը

Ատենախոսությունը գրված է համակարգչային ձևաչափով, հայերեն լեզվով, գրագետ, առանց ուղղագրական սխալների, շարադրված է 120 էջերում և պարունակում է բովանդակության հապավումների ցանկ, ներածություն, գրականության տեսություն, սեփական հետազոտությունների 4 գլուխներ, որոնք

լուսաբանված են 18 աղյուսակում և 37 նկարում, ամփոփում, եզրակացություն, առաջարկություններ, օգտագործված գրականության ցանկ, որը ներառում է 171 գիտական հղում, այդ թվում 14 հայրենական, 22-ը՝ ռուսական և 135-ը՝ համաշխարհային հեղինակների և 4 հավելվածներ:

Հետազոտվող հիմնահարցից ելնելով, աշխատանքի ներածությունում հայցորդը հիմնավորում է թեմայի արդիականությունը, նպատակը, հետազոտության խնդիրները, ստացված արդյունքների գիտական նորույթը, գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ գրականության տեսության գլխի չորս ենթագլուխներում, հեղինակը, ելնելով աշխատանքի նպատակից և խնդիրներից, մանրամասն ներկայացնում է առկա գիտական տեղեկատվությունը: Տրվել է բրուցելոզի ընդհանուր բնութագիրը, դիտարկվել են համաճարակաբանական օրինաչափությունները, կանխարգելման, համաճարակաբանական հսկողության մոտեցումները, որոշ կլինիկական առանձնահատկություններ:

Ատենախոսության երկրորդ գլուխը ներկայացնում է հետազոտության նյութը և մեթոդները: Հայցորդի կողմից անցկացվել են համաճարակաբանական դիտողական հետահայաց հետազոտություններ ՀՀ տարածքում բրուցելոզի համաճարակաբանական օրինաչափությունների պարզաբանման ուղղությամբ: Օգտագործվել են ժամանակակից վիճակագրական մեթոդներ: Բրուցելոզի տարածվածության գնահատականը, ռիսկային տարածքների որոշումն անցկացվել է ՀՀ տարածքային գոտիավորման ճանապարհով՝ բրուցելոզով առաջնակի հիվանդացության վերլուծության հիման վրա 2004-2022թթ. ժամանակահատվածի կտրվածքով:

Աշխատանքի երրորդ գլուխն ամփոփվում է հեղինակի սեփական հետազոտությունների արդյունքները, մասնավորապես, անդրադարձ է կատարվում 2004-2014թթ. ընկած ժամանակահատվածում ՀՀ-ում առաջնակի հաստատված բրուցելոզի դեպքերի ընդհանուր նկարագրին, 2016-2022թթ. ընկած ժամանակահատվածում ՀՀ–ում առաջնակի հաստատված բրուցելոզի հիմնական բնութագրին, ըստ մի շարք գործոնների, 2016-2022թթ. ժամանակահատվածում մարդկանց շրջանում առաջնակի հաստատված բրուցելոզի դեպքերի սեզոնային

վերլուծությունը և «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն»-ում արձանագրված բրուցելոզի դեպքերի կլինիկական վերլուծությունը:

«Ամփոփում» գլխում հայցորդը մանրամասն անդրադառնում է իրականացված հետազոտություններին և վերլուծում ստացված արդյունքները:

Ստացված տվյալները տրամաբանորեն ամփոփված են 6 եզրահանգումներում, որոնք ամբողջովին արտահայտում են հետազոտվող հիմնահարցի էությունը և համապատասխանում են առաջադրված նպատակին ու խնդիրներին:

Ատենախոսության սեղմագիրն արտացոլում է աշխատանքի հիմնական դրույթները և համապատասխանում է ներկայացվող պահանջներին:

Ատենախոսության գիտական նորույթը և գործնական նշանակությունը պահանջված է, հատկապես բրուցելոզի ակտիվացման և տարածվածության ֆոնի վրա, այսպիսի գիտական հետազոտական աշխատանքներն ու վերլուծությունները պահանջված են մեր երկրում և դրանց գործնական կիրառումը կարող են կանխել մարդու և կենդանիների համար ընդհանուր վարակների տարածումը՝ հատկապես «Մեկ առողջություն» համատեքստում:

Աշխատանքի հիմնական արդյունքները տպագրված են 10 գիտական հոդվածներում, որոնցից 4-ը միանձնյա հեղինակությամբ՝ տպագրված Հայաստանի և արտերկրի ամսագրերում: Հրապարակումները ներառված են միջազգային գիտական աշխատանքների շտեմարաններում: Տպագրված աշխատանքները լիովին արտացոլում են ատենախոսության բովանդակությունը:

Կատարված ուսումնասիրությունների գիտական դրույթները և եզրահանգումների ճշտությունը հիմնավորվում են օգտագործած 171 անուն գրական աղբյուրների կողմից հաստատված պնդումներով և դրանց վերլուծություններով, որի հետ կապված ստացված վերջնական արդյունքները համահունչ են մասնագիտական գրականության տվյալների հետ: Ներկայացված եզրակացությունները ներառում են աշխատանքի արդյունքում ստացված բոլոր հիմնական դրույթները: Հիմք ընդունելով օգտագործված դասական և ժամանակակից մեթոդների կիրառումը՝ աշխատանքում

ստացված արդյունքների հավաստիությունը բավականին բարձր է: Ատենախոսության սեղմագիրն արտացոլում է աշխատանքում առկա բոլոր հիմնական դրույթները:

Այսպիսով, Լ. Սարգսյանի կողմից կատարվել է բավականին ծավալուն, բազմակողմանի և մանրակրկիտ վերլուծություն՝ առաջադրված հիմնահարցերի հետևողական ու տրամաբանական հաջորդականությամբ:

Հաջորդիվ ներկայացվում են որոշ առաջարկություններ, դիտողություններ և հարցեր.

1. Ատենախոսության մեջ երբեմն հանդիպում են վրիպակներ, ինչպես նաև որոշ բառեր կարելի էր փոխարինել հայեցի տարբերակով, օրինակ՝ «ռետրոսպեկտիվ» բառը՝ «հետահայաց»-ով, «Էնդեմիկ» բառը՝ «տեղաճարակային» բառով:
2. Ցանկալի էր «Մեկ Առողջության» գաղափարը նկարագրել ավելի մարակրկիտ:Համաճարակաբանական և կլինիկական տվյալների վերլուծությունից բացի ցանկալի կլիներ ատենախոսության մեջ ներառել նաև լաբորատոր հետազոտության և ախտորոշման արդյունքները նույն ժամանակահատվածի համար:
3. Նպատակահարմար էր գրականության ցանկում ավելի լիարժեք ընդգրկել հայրենական հեղինակների աշխատանքները, մասնավորապես ՊՎՆԳ ծրագրի շրջանակներում իրականացված հետազոտությունների վերաբերյալ:
4. Խոսք է գնում տվյալների բազայի ստեղծման մասին, քանի՞ տարվա տվյալների բազա է ստեղծվել, ինչ՞ ծրագրի հիմքով:
5. Ցանկալի էր կատարել SWOT վերլուծություն՝ պատճառահետևանքային կապերի բացահայտմամբ:

Բերված առաջարկություններն ու դիտողությունները չունեն սկզբունքային նշանակություն և բնավ չեն կարող էական ազդեցություն թողնել ատենախոսի կողմից կատարված ծավալուն և խիստ պահանջված աշխատանքի գնահատականի վրա, չեն նվազեցնում ատենախոսությունում ստացված արդյունքների գիտական արժեքը և նշանակությունը: Այն կազմված է գրագետ, գործիմացությամբ՝ հաշվի առնելով հանրապետության արդի պայմանները: Աշխատանքը հեռանկարային է և օժտված գործնական մեծ նշանակությամբ ու կիրառելիությամբ: Թեման հետագայում

խորացնելու նպատակով հնարավոր է շարունակական գիտական հետազոտություններ իրականացնել նոր բացահայտումներ կատարելու և համաճարակաբանական հսկողությունը կատարելագործելու համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ: Լիլիթ Անդրեյի Սարգսյանի «Հայաստանի հանրապետությունում բրուցելոզի համաճարակաբանական բնութագիրը» թեմայով ատենախոսությունը պահանջված և արդիական աշխատանք է, հատկապես մարդկանց և կենդանիների համար ընդհանուր վարակների, մասնավորապես բրուցելոզի համաճարակաբանական հսկողության առումով, հատկապես արտակարգ իրավիճակներում ու համաճարակային լարված ժամանակահատվածում: Ատենախոսությունը իր արդիականությամբ, բովանդակությամբ, ծավալով, ստացված արդյունքներով և դրանցից բխող եզրահանգումներով, գիտական նորույթով և առաջարկությունների գիտագործնական նշանակությամբ լիովին համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից գիտական աստիճանի շնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակը արժանի է ԺԴ.00.16 «Համաճարակաբանություն» մասնագիտությամբ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Առողջապահության նախարարության
«Հիվանդությունների վերահսկման և
կանխարգելման ազգային կենտրոն»
ՊՈԱԿ-ի «Շիրակ» մասնաճյուղի
տնօրենի տեղակալ, բ.գ.թ.,դոցենտ Ա.Ա. Անդրյան

Ա.Ա,Անդրյանի ստորագրությունը հաստատում եմ:

Առողջապահության նախարարության
«Հիվանդությունների վերահսկման և
Կանխարգելման ազգային կենտրոն»
ՊՈԱԿ -ի
անձակազմի կառավարման բաժնի պետ Ա. Գ. Երիցյան

12.09.2024թ.